Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսինե Սահակյան

2. Գործուղման վայրը և ժամկետները

Փարիզի քաղաքապետարանի գիտաժողովների սրահ: 2026թ. մայիսի 28-30-ը: Ֆրանսիա, Փարիզ:

3. Հրավիրող կողմը

Փարիզի Քրդական ինստիտուտ-հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Փարիզի Քրդական ինստիտուտ-հիմնադրամի կողմից կազմակերպված գիտաժողովին «Կոմիտասը և քրդական երաժշտությունը» խորագրով դասախոսությամբ հանդես գալու և Փարիզի Քրդական ինստիտուտ-հիմնադրամի գրադարանի, արխիվի, ինչպես նաև գիտական բաժնի հետ համագործակցություն սկսելու ակնկալիքով:

5. Քննարկված թեմաները

Հայ-քրդական մշակութային առնչություններ, քրդական երաժշտությունը ներկայացնող հայ և օտարազգի երաժիշտների գործունեություն, բանահավաքչական-ազգագրական թեմաներ, Կոմիտաս Վարդապետի դերը քրդական մշակույթի կայացման գործում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ելույթով հանդես եկավ Վաշինգտոնի Քրդական ինստիտուտի անդամ, ֆիզիկոս-մտավորական, Փարիզի Քրդական ինստիտուտ-հիմնադրամի տնօրեն Քենդալ Նեզանը, որը ներկայացրեց հիմնադրամի գործունեությունը, ինչպես նաև այն հայ և քուրդ երաժիշտներին, որոնց քրդական երգերի և մեղեդիների ձայնագրությունները պահպանվում են ինստիտուտում:

Հանդիպումներ տեղի ունեցան փարիզաբնակ գրող Զինե Մամոյանի, Հիմնադրամի մշակութային բաժնի ղեկավար Մելիս Կայայի, փարիզաբնակ խմբավար Կոմիտաս Գևորգյանի, Ալֆորվիլ քաղաքի մշակութային կենտրոնի ղեկավար Նորա Սարաֆյան-Թաշչյանի, քրդական և հայկական համայքների ներկայացուցիչների, ինչպես նաև

ֆրանսահայ և մեքսիկահայ նկարիչների հետ, որոնց կտավների ցուցադրությամբ էլ ավարտվեց գիտաժողովը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանիպման և քննարկումների արդյունքներում որոշվեց սկսել համագործակցություն «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և Փարիզի Քրդական ինստիտուտ-հիմնադրամի միջև: Մասնավորապես, հնարավորություն է ընձեռված Կոմիտաս թանգարան-ինստիտուտի գիտական բաժնի աշխատակիցներին առավել մոտիկից ծանոթանալու Հիմնադրամի արխիվային և գրադարանի երաժշտական նյութերի հետ: Քննարկման արդյունքում պարզվեց, որ Քրդական ինստիտուտը տիրապետում է Կոմիտասի քրդական երաժշտությանը վերաբերով նոր նյութերի, ինչը կարող է նպաստել կոմիտասագիտական հետազոտությունների ամբողջացմանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկություն եղավ, փոխադարձաբար մասնագետ հրավիրել Հայաստան, կազմակերպել բանախոսություն-դասախոսություն, ինչը կնպաստի հայ-քրդական երաժշտական առնչությունների նոր եզրերի բացահայտմանը: Կոմիտասի թանգարան-ինստիտուտից առաջարկ եղավ հրապարակել հոդված, որտեղ կլուսաբանվի մայիսի 29-ի համատեղ դասախոսության և գիտական քննարկումների նյութը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

01.06.2026թ.